Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 227 - Ա
որոշման

«ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բնակչության բժշկական ծառայությունների մատուցման պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրում կառուցել բժշկական ամբուլատորիա և իրականացնել շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայր, առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	100,091,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայր
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրում կառուցել բժշկական ամբուլատորիա: Կիրականացվեն հողային, նկուղի և հիմքերի աշխատանքներ, հիմնակմախքի կառուցման, նոր դռների և լուսամուտների տեղադրման, տանիքի կառուցման աշխատանքներ, ներքին հարդարման, ջեռուցման, ներքին ջրամատակարարման և կոյուղու, ներքին էլեկտրամատակարարման, ինչպես նաև ցանկապատման ու

		տարածքի բարեկարգման, աշխատանքներ: Իրականացվելու է՝ 2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատ-վածում՝ 99,100,000 դրամի չափով. 2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրում բժշկական ամբուլատորիա կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում: Իրականացվելու է 2026 թ. ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 991,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրում բժշկական ամբուլատորիայի կառուցման աշխատանքների իրականացում՝ 99,100,000 դրամի չափով. 2) շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 991,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ